Յոթ ժամ Ադամում

Արևն արդեն թեքվում էր մայրամուտ, երբ մենք անցանք Մարտակերտ—Աղդամ խճուղու ստուգման կետը: Վիկտոր Ալեքսեևիչը (Աղդամի շրջանի և քաղաքի զինվորական պարետը), որի հետ, իր գազիկով որոշել էինք կտրել Մարտակերտ—Աղդամ—Մարտունու շրջանի Ավդուռ գյուղ հեռավորությունը, ամեն կերպ ինձ ուզում էր համոզել, որ վտանգ չկա, Աղդամում արդեն հանգիստ է, սակայն երևում էր, որ ինքը ավելի էր հուզված: Դա նկատելի էր նրա ձայնից, շարժ ու ձևից, աչքերից, և ես անչափ անհարմար էի զգում, քանի որ ինքս եմ նրան դրել այդ անորոշ ու վտանգավոր կացության մեջ: Իսկ ես հանգիստ էի, ես կամավոր էի դիմել այդ քայլին և վրդովվելու պատճառներ չունեի:

Արդեն մոտենում ենք Աղդամին, աջից՝ Ղարաբաղյան լեռնաշխարհն է, ձախից՝ անծայրածիր հարթավայրը, իսկ դիմացը՝ Աղդամն է, լուռ, խորհրդավոր, պարուրված մայր մտնող արևի շողերի մեջ:

— Աղդամը շրջանցե՞մ, թե՞ գնամ կենտրոնով,— ինձ է դիմում Վիկտոր Ալեքսեևիչը:

— Կենտրոնով,— առանց վարանելու պատասխանում եմ ես, հասկացնելով, որ այսպիսի առիթ երևի էլ չի լինի:

Քիչ հետո գտնվում ենք կենտրոնական շուկայի մոտ, թեքվելով տեսնում եմ մինարեթները, գնում ենք ամենակենտրոնական փողոցով: Գլխավոր փողոցը բազմամարդ է, բազմության մեջ միլիցիայի համազգեստով շատերը կային, մոտորը չի դավաճանում, մենք անցնում ենք մեր ուզած ընթացքով:

— Զախից ազգային ճակատի կենտրոնը է,— ասում է Վիկտոր Ալեքսեևիչը:

Ես ժպտում եմ, վաղուց էի նկատել բարձր ամրացած դրոշը կիսազուսնով, և անցնում ենք:

Ես Աղդամը լավ եմ ճանաչում, մեր գյուղի համարյա բոլոր ճանապարհները անցնում են Աղդամով, մեր շուկան Աղդամում էր և մի ժամանակ իմ համագյուղացիների համար Աղդամը օտար չէր, իսկ հիմա...

Կարկառ գետը անցնում ենք:

— Ինչո՞ւ չգնացինք կամրջով:

— Քանդված է:

— Ինչո՞ւ:

— Ասում են՝ հայերն են պայթեցրել:

— Անհնար է. հայերը այստեղ չեն հասնում:

— Ասում են...

Աղդամ—Մարտունի խճուղու 9-րդ կիլոմետրում ես խնդրում եմ թեքվել դեպի Գյուլաբլու ադրբեջանական գյուղը: Զառիվայրի վրա մեքենան սկսում է վատ աշխատել, արդեն մթնել էր, շարժվում էինք լույսերը միացրած, դիմացից եկող և մեզ վազանցող մեքենաների թիվը մեծ է, բայց ոչինչ, մենք ևս բարձրանում ենք, թեկուզ մոտորը հաճախ դավաճանում է: Գյուլաբլու հասնելով, ես Վիկտոր Ալեքսեևիչին ցույց եմ տալիս այն տունը, ուր ապրում է իմ ադրբեջաներենի ուսուցիչը, այն տները, որտեղ ապրում էին մեր հին ծանոթները, և ինչ-որ չափով ցանկանում էի մեղմացնել Վիկտոր Ալեքսեևիչի ներքին հուզմունքը, հասկացնելով, որ այստեղ քիչ է վտանգավոր:

Նա ժպտում է իմ միամտության վրա, և կտրում-անցնում ենք Գյուլաբլուն: Նա ուզում է թեքվել դեպի աջ, ես հասկացնում եմ, որ այնտեղ Ավդալն է, իսկ Ավդուռը ոիմացն է: Նա, իհարկե, շփոթել էր անունները և հասկացնում է, որ Ավդուռ գընալու ճանապարհ չկա, պետք է վերադառնալ:

Ինձ հաջողվում է համոզել Վիկտոր Ալեքսեևիչին, որ քիչ հետո մեր հողն է և ինձ դժվար չէ 4—5 կմ ճանապարհ գնալ ոտքով, և կգնամ այնպիսի տեղերով, որ անկատ մնամ, հատկապես, որ մթան թանձր քողը շղարշել էր շրջապատը:

Բաժանումը թեկուզ ձգձգվեց, բայց տեղի ունեցավ, պայմանավորվեցինք առավոտյան հանդիպել նույն տեղում, ժամը 8-ին:

Ես կանգնեցի, մինչև մեքենան առաջ շարժվեց, և շարժվեցի դեպի հարազատ գյուղի լույսերը: Մութը հարազատի պես ինձ գուրգուրում էր:

Ես չկարողացա ստել քրոջս և ասացի, որ եկել եմ վաղուց փակված ճանապարհով, ուրախ էր, որ ոչինչ չէր պատահել, սակայն դեմ էր, որ ետ գնամ նորից եկած ճանապարհով, բայց նաև համոզված էր, որ ես խոսքս դրժողներից չեմ:

Առավոտյան, երբ ուղիղ ժամանակին ես տեղում էի, պարզվեց, որ Վիկտոր Ալեքսեևիչը եկել է մոտ 40 րոպե առաջ, որպեսզի ապահովի իմ անվտանգությունը: Բայց ամեն ինչ հանգիստ էր, շրջապատում մարդ չէր երևում, չեզոք գոտի էր, ուր անդորրը միայն կաքավներն ու միրհավերն էին խանգարում:

... Ես նստած էի պարետի առանձնասենյակում, Վիկտոր Ալեքսեևիչը կարգավորում էր իր անհետաձգելի գործերը, հաճախ դուրս էր գնում: Իսկ հաճախորդները շատ են, պարետի հետ կապված հարցերը՝ ես, ես ստիպված եմ հաճախորդներին բացատրել, թե ուր է գնացել փոխգնդապետը, խոսում եմ ռուսերեն, ադրբեջաներեն՝ եթե նրանք ռուսերեն չեն հասկանում, ես սկի էլ չեմ թաքցնում, որ հայ եմ, համոզված լինելով, որ թաքցնելը անհնար է:

Անցնում է ժամանակը, գտնում եմ մի գիրք (Նատալյա Կուզնեցովայի «Սառը ապրիլը»), սկսում եմ կարդալ, սպասումը հեշտանում է: Սենյակից դուրս անցուդարձը շատ է, շենքը հիմնականում տնային կառավարչություն է և զգացվում է, որ վարչահրամայական ձևով ղեկավարումը այստեղ դեռ պահպանվում է:

Եվ վերջապես ներս է գալիս Թելմանը՝ ադրբեջանցին, որին ինձ ծանոթացրել էր Վիկտոր Ալեքսեևիչը:

— Փոխգնդապետը կանչում է, մեքենան պատրաստ է:

Մենք դուրս ենք գալիս սենյակից: Նա նորից է դիմում ինձ:

— Շատ մեծ ոիսկ եք արել:

— Կարծո՞ւմ եք:

— Չէ, հիմա հանգիստ է, բայց ոչ ոք այդպիսի ոիսկ չի անում:

— Ես ավդուռցի եմ:

Մենք բազմանշանակ ժպտում ենք և շարժվում առաջ, շուրջը ադրբեջանցիներ են, ամեն ինչ հանգիստ է, դեմքերը խաղաղ են: Բակում, մեքենայի մոտ, նկատում եմ Վիկտոր Ալեքսեևիչին:

Աղդամից համարյա դուրս էինք եկել, երբ մոտորը նորից սկսեց փրթփրթալ: Պարզվում է՝ նորոգումը անարդյունք է:

Մինչև հաջողվում է հարևան զինվորական մասից մեքենա վերցնել, ժամերը շատանում են: Ես անհանգստանում եմ իմ ընկերների համար, որոնք սպասում են Մարտակերտում, և ջղայնանում եմ ինքս ինձ վրա, Վիկտոր Ալեքսեևիչը նույնպես՝ քանի որ խոստացել էր ինձ Մարտակերտ հասցնել ժամը 10-ին: Մենք առանց խոսքի հասկանում ենք իրար և ժպտում ենք: Բայց ինչ արած, արդեն ժամը 14-ն է մոտենում:

— Գնանք ճաշելու, քայլով, համարձակ,— դիմում է քաղաքի պարետը: Ես լուռ ենթարկվում եմ, և մենք առանց մեքենայի, ոտքով քայլում ենք Աղդամով՝ դեպի զինվորական ճաշարանը:

Ուտելու համարյա ոչինչ չի մնացել (գուցե և չի եղել): Մի-մի ափսե կաղամբապուր ճաշակելուց հետո, ետ ենք դալիս:

Դպրոցի բակ էր, շուրջը երեխաներ էին թռվռում, հարազատ մթնոլորտ էր (ես մանկավարժ եմ): Վիկտոր Ալեքսեևիչը ինձ հասկացրեց, թե երեխաները զգացին, որ ես հայ եմ: Ես տեղյակ էի և ակամայից մի տեսակ տխրել էի:

Վերջապես հաջողվեց մեքենա ստանալ: Երեքով վարորդախցիկում էինք: Մեքենան շարժվում էր անխափան: Արդեն ժամը 4-ն էր մոտենում, ճանապարհը հանգիստ էր:

— Երեկոյան, երբ քո մոտից ես ետ եկա, քաղաքը անհանգիստ էր: Ահագին խառնամբոխ էր հավաքվել, գնում էին դեպի Մարտակերտի կողմը: Լուր էր տարածվել, որ հայերը հարձակվել են Աղդամի վրա: Ինձ հաջողվեց կանգնեցնել ամբոխը,— պատմում էր Վիկտոր Ալեքսեևիչը,— երբ հասա Մարտակերտ, ամեն ինչ խաղաղ էր: Մարտակերտի փողոցներում նույնիսկ մարդ չտեսա, բոլորը քնած էին: Ահա թե ինչպես են ծնվում լուրերը, ինչեր կարող են լինել, եթե ժամանակին չբացահայտես սուտը: Ես ձգտում եմ խաղաղություն սերմանել: Գողություններ են կատարվում և շատ, շղթայաձև և չես կարող ասել, թե ով է առաջինը գողանում, սադրիչներ, գրգռողներ էլ շատ կան: Հեշտ չէ այս պայմաններում աշխատել, բայց դիմանում ենք:

Ոգտվելով առիթից, ես պարետին հաղորդում եմ, որ Մարտունու շրջանի Մյուրիշեն, Ավդուռ, Հացի գյուղերում էլ են կատարվում սադրանքներ, գողացվում անասուններ (այդ մասին ինձ ասել էին գյուղում): Օրինակ, Մյուրիշենում, օրը ցերեկով հայտնվել էին զինվորական համազգեստով անհայտ մարդիկ, ծեծել խուլուհամր անասնապահին, ցանկացել կողանել նրա որդուն, բայց, լավ է, որ ժողովուրդը հասել էր և չարագործներին փախուստի մատնել, Ավդուռում գողացվել է 20 խոզ, 4 կով, հրկիզվել է Հացի գյուղի թոչնանոցի նախկին շենքը...

Իհարկե, փաստերից շատերը հայտնի էին պարետին, և զգացվում էր, որ ցավում է այդ բոլորի համար և հասկանալի է, որ ամենակարող և ամենահաս չէ:

Զրույցը կարճեց ճանապարհը: Երբ հասանք Մարտակերտ, ժամը 4-ից քիչ անց էր: Ընկերներս անհանգիստ էին, բայց չէին կորցրել հույսը: Ամեն ինչ կարգին էր:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 22-ին, մենք պետք է գայինք Ստեփանակերտ: Հոռաթաղ գյուղի պրոֆտեխուսումնարանի տընտեսվարը խոստացել էր մեզ Ստեփանակերտ հասցնել, բայց պարզվեց, որ վառելանյութը քիչ է:

— Գուցե գնանք Աղդամո՞վ,— ինձ դիմեց Էդիկը (այսպես է տնտեսվարի անունը):

— Չի կարելի ոիսկի դիմել, մեքենաղ կջարդեն, կամ ո՞վ գիտե...

— Բայց չէ՞ որ դուք երեկ ավելի մեծ ոիսկի եք դիմել,— չի նահանջում Էդիկը:

— Ինձ հետ պարետն էր, և հետո ինձ համար ես եմ պատասխանատու, իսկ ձեզ համար վախենում եմ:

Ես և ինձ հետ գործուղում եկած ընկերս (Հ. Գրիգորյանը) չկարողացանք Էդիկին համոզել, որ ոիսկի չդիմի...

Սահմանագծում մեզ զինվորները կանգնեցրին, հիշեցրին, որ անվտանգությունը չեն երաշխավորում: Վատթարագույնն այն էր, որ չէինք կարող կապվել Վիկտոր Ալեքսեևիչի հետ, որ ապահովի մեր անցումը:

Ճանապարհը բաց էր, մենք շարժվում էինք առանց մեզ վրա ուշադրություն գրավելու, ապահովելով երթևեկության բոլոր կանոնները:

Անցանք առաջին գյուղը, երկրորդը, երրորդը, առանձնապես ոչինչ չկար, և Աղդամը մնաց ետևում: Դեպի Ստեփանակերտ գնացող ճանապարհի ստուգման առաջին կետն է, մեզ կանգնեցնում են:

Վարորդային փաստաթղթերը կարգին են: Մենք ազատ շունչ ենք քաշում: Զինվորները զարմանում են մեր հանդգնության վրա, առավոտյան ժամը 9-ն անց 30 րոպե է: Առաջ ենք շարժվում, և մինչև Ստեփանակերտի կենտրոն հասնելը մեզ մի քանի տեղ կանգնեցնում են, ստուգում բոլորիս փաստաթղթերը, մանրանում ամեն ինչում:

Ես զարմանում եմ: Թվում է, Արցախում ռուս զինվորներ չեն ծառայում, այլ ֆաշիստներ, այնպիսի ֆաշիստներ, որոնց մենք ծանոթ ենք գրականության էջերից, և ինձ մոտ փոխվում են Աղդամում ծառայող ռուս զինվորներից ստացած իմ լավ տպավորությունները: Իսկ թե ինչ է կատարվում զինվորների կողմից Ստեփանակերտի օդանավակայանում, դա արդեն աննկարագրելի է, պետք է միայն ականատես լինել, թե ինչ ստորացումների են ենթարկվում ուղևորները, ինչպես են քրքրվում նրանց իրերը, թալանվում մարդիկ՝ բռնագրավվում են ուղևորների ունեցած խմիչքները, ծխախոտը, հայերեն մեքենագրված թղթերն ու հոդվածները...

Ամեն ինչ պարզ է, ամեն ինչ կատարվում է կանխամտածված, ծրագրված, և այդ բոլորը գալիս է վերևից, ինչ-որ մարդկանց կամքով, նրանց, որոնց միջոցով արցախցու շատ բնական և սովորական ձգտումը վերածվեց երկու ժողովուրդների սահմանի թշնամության, բերեց անթիվ և անհամար զոհեր, փախստականներ և անհնարին չափերի հասնող տնտեսական վնասներ պատճառեց:

Էդուարդ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Արցախ—Երևան